Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի
<< Արեգունի գյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար :
Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ Թեստավորման և հարցազրույցի :
Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ընս ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի :
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

- Դիմում (Ձև 1) 1 լուսանկար 3x4 չափի
- Բանձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում) :
- ԻՆքնակենսագրություն (Ձև 5)
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ .
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ .
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հաստատող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք :
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **սեպտեմբերի 14-ը ներառյալ , ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ, Կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :**

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին** , ՀՀ Գեղարքունիքի մարզի Արեգունի գյուղի միջնակարգ դպրոցում :
Տեղեկությունների համար զանգահարել ՝ (093)23-28-15 հեռախոսահամարով: